հայցադիմումում չեն ներկայացվել բարդ իրավական վերլուծություններ կամ փաստերի նկատմամբ իրավական նորմերի կիրառման վերաբերյալ բարդ փաստարկներ: Բացի այդ, գործի քննությունն իրականացվել է գրավոր ընթացակարգով և գործ քննության ընթացքում դատական նիստեր չեն հրավիրվել:

Արդյունքում, հաշվի առնելով հայցվորի փաստաբանի կողմից սույն գործով փաստացի կատարված աշխատանքի ծավալի և փաստաբանական վարձատրության պայմանագրով սահմանված գումարի՝ 250.000 ՀՀ դրամի հարաբերակցությունը, գործի առանձնահատկությունը, նմանատիպ գործերով ձևավորված դատական պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայությունների դիմաց վճարվող գումարների չափը, ինչպես նաև այն, որ հայցը բավարարվել է, Դատարանը կարծում է, որ հայցվորի փաստաբանի խելամիտ վարձատրության չափը պետք է համարել 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, այն ներառել գործով դատական ծախսերի կազմում և բռնագանձել պատասխանող ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի համայնքից հօգուտ հայցվորի:

Ընդ որում, վերոնշյալի, գործի քննության ընթացքում դատական այլ ծախսերի հետ կապված պահանջների մասով գրավոր միջնորդություն ներկայացված չլինելու և գործի քննության հետ կապված այլ ծախսերը հավաստող ապացույցների բացակայության պայմաններում Դատարանը կարծում է, որ մնացած մասով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

VI. Եզրափակիչ մաս.

Դատարանը, հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով, 17-րդ հոդվածի 7-րդ մասով, 27-րդ հոդվածի 2-րդ մասով, 179-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-362-րդ հոդվածներով,

ՎՃՌԵՑ

1. ՄԱԼԿ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի համայնքի՝ թիվ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-36/26 ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի նախաձեռնումը ոչ իրավաչափ ճանաչելու և նույն ընթացակարգի հրավերն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել.

1.1. ոչ իրավաչափ ճանաչել թիվ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-36/26 ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի նախաձեռնումը,

1.2. անվավեր ճանաչել թիվ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-36/26 ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի հրավերը:

2. Դատական ծախսերը բաշխել հետևյալ կերպ.

2.1 ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի համայնքից հօգուտ «ՄԱԼԿ» ՍՊ ընկերության բռնագանձել 120.000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ գումար՝ որպես հայցադիմում ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումարի

փոխհատուցում,

2.2 ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի համայնքից հօգուտ «ՄԱԼԿ» ՍՊ ընկերության բռնագանձել 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես հայցվորի փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի փոխհատուցում,

2.3 իսկ մնացած մասով դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճռի կատարում ենթադրող մասը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Ազատ Դունամայյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEE2-701C-4323-8970 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am